ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/70, 23.05.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» բաց մրցույթ

Գնման առարկան՝ ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել թիվ «ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով գնման ընթացակարգի Հանձնաժողովին և Պատվիրատուին չկայացած հայտարարել «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313» և նոր մրցույթ հայտարարել առանց ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված նշումի և/կամ նշելով, որ նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
(հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փ. 1)

Բողոք ներկայացնող անձ՝
Ա/Ձ Սեյրան Բալասյան Արթուրի
(հասցե՝ ք. Երևան, Երզնկյան փողոց, տուն 27
ՀՎՀՀ՝ 20161762, «Ամերիաբանկ» ՓԲԸ, հ/հ 1570065386390100
balasyan.seryan@mail.ru, 098-710698)

Պատվիրատու՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ
(հասցե՝ ք. Երևան, Թևոսյան 5)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11,
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի կարիքների համար
ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերում

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար ավտոբուսների պահեստամասերի ձեռքբերման նպատակով ս. թ. մայիսի 11-ին կազմակերպել է ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11 ծածկագրով բաց մրցույթ: Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունի նաև մեր կազմակերպությունը: Մրցույթի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում (այսուհետ՝ Ժամանակացույց) «ապրանքի տեխնիկական բնութագիր» դաշտում հստակ չեն նկարագրված ապրանքի բնութագրերը, ինչպես պահանջվում է ՀՀ գնումների մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին կետին, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները: Ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված է նշում, որ «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313 չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր «HIGER BUS» ֆիրմայի կողմից, որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսներին», ինչը հակասում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին, մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների ամբողջական և համարժեք նկարագրությունը, այսինքն Պատվիրատուն դիտավորյալ սահմանել է ոչ հավասար պայմաններ: Միաժամանակ տեղին ենք համարում ավելացնել, որ Պատվիրատուն իր նախորդ տարվա նմանատիպ մրցույթում չի սահմանել նման կետ:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով ասում է, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Տվյալ դեպքում մասնակիցը խախտել է Օրենքի վերոգրյալ կետը, քանի որ սահմանել է խտրական պահանջ:

Նկատի ունենալով ողջ վերոգրյալը, կարծում ենք, որ ճիշտ կլիներ Պատվիրատուի կողմից սահմանել, որ տվյալ չափաբաժիններով նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին պարտավորեցնել չկայացած հայտարարել «57, 141, 147, 165, 191, 205, 212, 221, 222, 223, 260, 266, 267, 283, 294, 295, 297, 309, 310, 311, 312, 313» և նոր մրցույթ հայտարարել առանց ժամանակացույցի «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» դաշտում արված նշումի և/կամ նշելով, որ նախատեսված պահեստամասերի համար ներկայացնել հավաստագիր որ մատակարարված ապրանքները համապատասխանում են HIGER KLQ 6770 մակնիշի ավտոբուսին

Կից ներկայացնում եմ"

- բողոքարկման վճարի անդորրագրի պատճենը,
- ԵՔԵԱ-ԲՄԱՊՁԲ-20/11 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընթացակարգի հայտարարությունը,
- Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Առդիր՝ 4 թերթ:

Ս. Բալասյան